



ԵՐԿՈՒԵԱԹԻ, 21 ՄԱՐՏ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՐՏՈՍ 16

ԱՂՈԹՔ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ

Պահպանէ զիս, ճ՛վ Աստուած, քեզի ապաւինած եմ:
Տիրոջ ըսի. «Դուս ես Տէրս, քեզմէ գատ ուրախութիւն չունիմ»:
Ինչ փառահեղ եմ երկրի վրայ սուրբերը.
ամբողջ փափաքս է՝ անոնց հետ ըլլալ:
Կ'օրհնաբանեմ Տէրը, որ իր խորհուրդներով կ'առաջնորդէ զիս,
նոյնիսկ գիշերը զիս կը խրատէ խղմտանքիս միջոցաւ:
Միշտ Տէրը իմ դիմացս ներկայ ունիմ.
Երբ անիկա իմ կողքիս է՝ ոչինչ կրնայ զիս սասանեցնել:
Ահա թէ ինչու սիրտս ուրախ է,
հոգիս ցնծութեան մէջ է,
եւ մարմինս վստահութեամբ կը հանգչի,
որովհետեւ գիտեմ թէ զիս մեռելներու աշխարհին մէջ պիտի չձգես,
եւ պիտի չթողուս որ քու հաւատարիմ ծառայիդ մարմինը փտութիւն տեսնէ:
Կեանքի նամբան ցոյց կու տաս ինձի.
Ներկայութիւնդ զիս ցնծութեամբ կը լեցնէ,
եւ քու մօտդ ըլլալը յաւէտ երջանկութիւն է:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վձենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՂՈԹՔ

Պահապան ամենայնի Զրիստոս,
աշ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻՒԹԸ
✠
ՆՄԱՆԻԼ ԲՐԻՍՏՈՍԻ
✠

«Յիշէ զիս, Տէր, երբ գաս արքայութեամբդ»: Քրիստոս պարասխանելով պիտի ըսէ. «**Վարահ եղիք, այսօր ինձի հետ պիտի ըլլաս դրախտին մէջ**»:

Աջակողմեան աւագակը, որուն կեանքը լեցուն մեղքերով, որուն համար ալ կարծէք իր արդար պարիժը կը կրեր խաչուելով: Հերաքրքրականօրէն, կարելի է հարցնել, թէ ի՞նչպէս արդեօք այս աւագակը դարձի եկաւ եւ խնդրեց Քրիստոսէ որ զինք յիշէ իր արքայութեանը մէջ: Մի գուցէ րեսնելով ու լսելով, թէ ինչպէս Քրիստոս ներում կը խնդրէր զինք խաչողներուն համար, «Հայր ներէ, որովհետեւ չեն գիտեր ինչ կ'ընեն», այս արքայայտութիւնը կարծէք աւագակին կարծրացած սիրտը փափկացո՞ւց: Կամ մի գուցէ Քրիստոսի նայուածքը, Անոր քաղցր ձայնը: Ինչ ալ ըլլան պարագաները, սակայն, մէկ բան որոշ է որ վերջին պահուն դիմեց ապաշխարութեան, եւ որուն խնդրանքն ու աղօթքը լսելի ու պարասխանելի դարձան: Աւագակին աղօթքը անմիջապէս պարասխանուեցաւ, այն ինչ շարեր մնաց անպարասխան, երբ Քրիստոս կը դարուէր ու Իրեն հարց կու փային, չէր պարասխաներ: Իսկ սրացած պարասխանը շար աւելի հետաքրքրական էր, որովհետեւ Քրիստոս չըսաւ այսօր դրախտին մէջ կ'ըլլաս, այլ՝ այսօր ինձի հետ դրախտին մէջ կ'ըլլաս: Քրիստոս այս արքայայտութեամբ ցոյց փուս մտերմութիւնը, Իր անմիջական ներկայութիւնը աւագակին հետ: Իր փուսած պարասխանով ուրախացուց եւ ուրախացաւ Քրիստոս: Շարեր փարբեր փարբեր առիթներով հանդիպեցան ու կը հանդիպին Քրիստոսի, բայց որքան զարմանալի է այս աւագակին պարագան որուն հանդիպումը Քրիստոսի հետ եղաւ խաչելութեան պահուն: Ահա հոս է խորհուրդը, երբ Քրիստոս պիտի ըսէ, որ «Աստուծոյ թագաւորութիւնը արքայքնապէս րեսանելի նշաններով պիտի չգայ» (Ղուկ 17:20): Արո՞ւ մարքէն կ'անցնի թէ ե՞րբ րեղի կրնար ունենալ աւագակին ու Քրիստոսի միջեւ հանդիպումը: Ահա Տիրոջ ողորմութեան ժամակէտը:

Աւագակը այսպէս աղօթեց. «Յիշէ զիս, Տէր, երբ քու թագաւորութեամբդ գաս»: Առաջին հերթին ան խոստովանեցաւ, թէ Յիսուս Տէր է, Աստուած է: Խոստովանեցաւ թէ Ան թագաւոր է, Իր թագաւորութեամբը գալու: Ան խոստովանեցաւ իր մեղաւորութիւնը: Խոստովանեցաւ Քրիստոսի անմեղութիւնը ու Անոր խաչելութիւնը իր մեղքերուն համար: Տակաւին, իր մարմնական ցաւերուն մէջ ան կը մտածէր իր ապագայի մասին: Ճիշդ է մարմինը կը փառապի, կը ցաւի, բայց գոնէ հոգին փրկուի, որուն համար ալ կ'աղերսէ ըսելով. «Յիշէ զիս, Տէր քու ողորմութեամբդ»: Զիս յիշէ, եւ ոչ թէ մեղքերս: Յիշէ զիս այնպէս մը որ չդատուիմ անոնց հետ, որոնց պիտի ըսես, «Ես ձեզ չեմ ճանչնար»: Աւելին, «Յիշէ զիս» արքայայտութեան մէջ կայ այն երանգը, որ դուն զիս գիտես արդէն, ուրեմն յիշէ զիս:

Յաճախ կայ այն փրամաքանութիւնը, որովհետեւ աւագակին վերջին ժամերն էին յիշեց Տէրը, բայց միւս աւագակին ալ վերջին ժամերն էին, ան ինչո՞ւ նոյնը չըրաւ, այլ ընդհակառակը նախապէս: Անոր միակ մտահոգութիւնը ցաւէն ազատիլն էր, խաչէն վար իջնելը, որպէսզի վերադառնար աշխարհին: Եւ փոխանակ վերջին պահուն զոջալու, ապաշխարելու, ընդհակառակը մեղքին վրայ ուրիշ մեղք ալ աւելցուց: Հակառակ այն իրողութեան, որ ձախակողմեան աւագակը մօտ էր Քրիստոսի, ան ալ սրտին մօտիկ, բայց հոգիով, սրտով անկէ շար հեռու:

Քրիստոս խոստացաւ աւագակին եւ պարասխանեց անոր խնդրանքին: Ան խնդրեց, որ զիս ալ յիշէ երբ քու արքայութեամբդ գաս: Քրիստոսի ըսաւ. «Ինձի հետ պիտի ըլլաս դրախտին մէջ»: Նախ աւագակը անդրադարձաւ որ Քրիստոսի արքայութիւնը երկրաւոր չէ, այլ՝ երկնային ու հոգեւոր: Միւս կողմէ, Քրիստոս նախ կանխավճար փուսաւ, դրախտին մէջ, ապա Իր երկրորդ գալուստին դարավարութեան պահուն աջ կողմը կանգնելու, ինչպէս հիմա աջ կողմն է խաչելութեան պահուն: Անոր համար ուրախութիւն մըն է որ ապրեցաւ աւագակը: Այո, նոյնիսկ մահուան պահուն երբ Քրիստոսի հետ ենք ցնծութիւն եւ ուրախութիւն է որ կ'ապրինք: Քրիստոս իր այս արքայայտութեամբ դրախտին փակ դուռը բացաւ, ինչ որ արեւօք փակուած էր Ադամին մեղանշումով: Եւ որովհետեւ միայն Աստուած Ինք կրնայ մեղքեր ներել եւ դրախտին դուռը բանալ, ահաասիկ Քրիստոս այս երկուքն է որ կարարեց ու խոստացաւ աւագակին: Ահա Քրիստոս իր թափած արիւնով դրախտին դռները բացաւ: Կը բանայ անոնց դիմաց, որոնք աղերսանքով ու ապաշխարութեամբ իրեն կը դիմեն: Տակաւին, աւագակը իր աղօթքին պարասխանը սրացաւ առանց քաւարան երթալու, որ կը նշանակէ քաւարանի հասկացողութիւն չկայ: Ուստի, դրախտը այն սպասման վայրն է, ուր արդարները կը սպասեն ու կը վայելեն Քրիստոսի ներկայութիւնը: Իր ցաւերը մէկդի թողած խօսեցաւ եւ երջանկացուց աւագակը: Ականջ փուսաւ անոր խնդրանքին ու պարասխանեց: Ուրեմն Իր իսկ օրինակովը կարելի է Իրեն նմանիլ, երբ ցաւի ու փառապանքի մէջ ենք օգնելու ուրիշին, հասնելու անոր կարիքներուն, մխիթարելու զինքը: Եւ աւագակին նման Իրեն դիմելու, որ մեզ ալ յիշէ երբ գաս արքայութեամբդ: